ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒՄ

2016թ. ապրիլի 12 **թիվ 34 -Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 64-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի հուլիսի 2-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման մարզային պլանը հաստատելու մասին>> N 64-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հավելվածի 1-ին բաժնի 4-րդ կետի 1-ին ենթակետի <<կ>> պարբերության <<<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի <<Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին>> N 134-Ն որոշում>>>> բառերը փոխարինել <<<<2015 թվականի հունվարի 22-ի <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 46-Ն որոշում>>>> բառերով,

2) ամբողջ հավելվածում <<կրտսեր դիսպետչեր>> բառերը փոխարինել <<օպերատիվ հերթափոխի կրտսեր հրահանգիչ>> բառերով,

3) ամբողջ հավելվածում <<ՔՊ առևտրի, սննդի ու նյութատեխնիկական մատակարարման ծառայություն>> բառերը փոխարինել <<ՔՊ առևտրի և սննդի ծառայություն>> և <<ՔՊ նյութատեխնիկական մատակարարման ծառայություն>> բառերով:

Գ.ԳՅՈՌԱԼՅԱՆ